Ս. Ֆրանցիսկոյի կենդանի մնացած բնակիչներին սով է սպառնում։ Կառավարութիւնը պատուիրել է Պօրտլանդի և Սիտի պաշտօնեաներին մթերքներ գնել և շուտով ուղարկել քաղաք՝ մաքսային մակոյկներով։ Երկու հարիւր բժիշկներ ամեն ջանք թափելով՝ աշխատում են շուտափոյթ օգնութեան հասնել աւերակների տակից հանուած կենդանի զոհերին։ Բոլոր հրդեհուած շէնքերի համար կրակի դէմ ապահովագրական ընկերութիւնները որոշել են վնասը հատուցանել։ Միմիայն Ս. Ֆրանցիսկոյում վնասները հաշուել են մօտաւորապէս մօտ 200 միլիոն դոլլար։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Գրադարան «Կեանքի» № 1. Վ. Վօղօվօղօվ. ընդհանուր ընտրողական իրաւունքը արևմտքում. թարգմ. Կ. Մելքայէլեան. Թիֆլիս 1906. 10 կ.

,, № 2. Բ. Իշխանեան. տնտեսական զարգացման ֆազերը. Թիֆլիս 1906. 15 կ.

Բամալեանց Ս. Սասունցի Ցովնան. պատմական վէպիկ։ Թիֆլիս 1906 գ. 30 կ.

Ջաւախեցի. պատկերներ. I գրքոյկ. Թիֆլիս 1906 գ. 60 կ.

Hovhan Hagopian. The Relations of the Armenians and the Franks During the Reign of Leon II, 1186—1219. Boston 1905

Ց. Ցակոբեան. գրպանի բառարան անգլիերէնէ հայերէն. Բոստոն. տպարան Արարատ հրատարակչական ընկ. 1905.

Կոմս Լ. Տալստոյ 1. Աստրեստանի արքայ Աստարհադդոնը. 2. երեք հարց. թարգմ. Գր. Շարուդաղեան. հրատ. Գ. Բաբուրեանցի. Թիֆլիս 1905 գ. 5 կ.

Ապահ.—Պատասխանատուները. բաց նամակ բոլոր Հնչակեան ազնիւ զինուորներուն. Գահիրէ, 10 մարտ 1906. ձրի։

Հաշիւ Վանքի աւագ եկեղեցու մուտք ու ծախքի 1904 յունիս 27-ց31 դեկտ. 1905 ամի։—Նոյն 1905 թուի համար։

Հաշիւ Կուկիոյ Նորաշէն ս. Աստուածածնի մուտք ու ծախքի 1905 թ.

Հաշիւ Մողնի եկեղեցու 1904 և 1905 թ.։